



47. ՊԱԼԱՔ ԱԶԱՌ

Ժամանակով կազիմ թագավորը, ուր մեկ լաճ:

Թագավոր կը վիրջանա: Տըղեն կիլնը թագավորը տեղ թագավոր կը նըստը, խեր-խերաթ կանը, բռնավորքիր կը թըղնը, մեկ խերաթխանե'մ կը շինը: Ատ խերաթխանին փանջարե'մ կը շինը, մեկ կը նըստըցըցը անտե, սանտողըմ լիկ ուղսկը կը տընը անտեղ, վով ընչ փանջարը տակ վե ընցնը՝ ուղսկի'մ կը թալը անու խամար:

Այա'մ վերա կընցընը, մեկ դավրեշըմ կը գա հատե, փանջարը տակ վե կը ընցընը, ուղսկի'մ կը կապին քաֆկը ճութ, փանջարեն վե կը թըլին:

Դավրեշ կառնը կըսը. - Նա ի՞նչ կը:

Կըսին. - Մի թագավոր մեռիր ը, անու լաճ խերաթխանե'մ բացիր, խերաթ կանը:

Դավրեշ կըսը. - Խանկըցա, խերաթ կանին, Պասրանու թագավորը ախչիկ խերաթխանե'մ բացիր ը, քառսուն փանջարա յը թըղիր, համեն փանջարից քառսուն ուղսկը կը թըլը խալկը խամար, անցկում խերաթխանա կիլնը:

Թագավոր կը հիմանա, կը հորոդկը, ան դավրեշ կը տանը:

Կըսը. - Դավրեշ, տաւ ընցնա պա՞մ իս սիր:

Կըսը. - Խա՛, Պասրանու թագավորը ախչիկ խերաթխանե'մ բացիր ը, քառսուն փանջարա, հըմեն փանջարից քառսուն ուղսկը կը թըլը:

Թագավոր կըսը. - Ուա՛, իս թագավոր մ' եմ, իս չըմ կանա աթարզ խերաթխանա բանա, ան ի՞նչըխ բացիր: Ահդ իլնը, տաւ

կինաս ըստա, իս խաւկին չըմ ավտա, իս իմ աչքով տեսնամ, նուր գամ, իս հար տը յամ, մըհա ի՞նչըխ բացիրը, իս թագաւոր մ' եմ, մեկ ուղսկը կը տամ, գըլոխ չըմ կանա խանը, ան ինչըխ ախչիկ մը քառսուն ուղսկը կը բըլավը, գըլոխ կը խանը, համեն փանջարից քառսուն ուղսկը կը բըլավը, տ'երթամ իրիշկիմ, թը աղուրթը, տը գամ, քյի ագա տ'անիմ, թը չէ, սուտ էլավ, քու վիզ կը գարկիմ:

Դավրեշ կը մընա հատե, թագաւոր կիւնը, պարկըմ ուղսկը կը լըցը, ուրը թայիտպիր կը խը, կիւնը, դավրեշը խանըլ կը խագըն, կիւնը, կը յա:

Կանստ կանը Պանսրանու քաղաք, անցկում կը յա, կան կը գա, կան կը գա, շիվար կիւնը, ան պարկ ուղսկին կը խըլըսըն՝ ծիւն կը ծախը, կուտը, անցկում կան կը գա, Պանսրանու քաղըը սաւըխ չառնը:

Շատ կան կը գա, կերթա, մեկ սարի'մ գըլոխ մեկ խովըվում ռաստ կը գա:

Խովըվուչ կըսը. - Խովի'վ, իս անուրը իմ, իրիք օր կա՝ անուրթը կան կը գամ, խաց կա՞:

Կըսը. - Իս Աստըծու սային Աստըծուն իմ թագաւորի ախչը-կան, խաց շատ կա:

Կիւնը, կաթ կը կըթը, պու պան կը բիրը, դավրեշ կուտը, լա քիչ կուտը:

Խովիվ էսաց. - Դավրեշ, տու շատ անուրթը յեր, տու քիչ կերար, տու չէ՞ր շիվար, շիվար մարթ քի՞չ կուտը, քու կիր կիր չէր:

Կըսը. - Է՛յ, ան կանտար կարցա ուտեր:

Կըսը. - Նա վի՞ ոչխարն ը:

Էսաց. - Նա Պանսրանու թագաւորը ախչկան ոչխարն ը:

Կըսը. - Պանսրանու քաղաք ուրտե՞ղն ը, անու ախչկան սարեն հո՞ւր ը:

Կըսը. - Կիւնիս մա կըրը վերա, շուր կառնիս վար քաղքին, ախչկան սարեն էլ հանտե յը:

Դավրեշն էլ կիւնը, կանստ կանը, կը յա:

Խերաթխանեն կը խարցընը, կը ո՞րտեղն ը:

Խերաթխանեն ինչ պալու կիւնը, կերթա փանջարը տակ վե կը ընցընը, քաֆիկըմ կը գա տակ, կը պըռնա, կը խը՝ քառսուն ուղսկը, ան կառնը, կը յա փանջարի'մ տակ վե, քաֆիկ մ' էլ կը գա, կը պանա, կը խը եմէլ քառսուն ուղսկը:

Քառասուն փանջարը տակըն էլ համեն փանջարից քառասուն ուղսկը կը գա:

Դավրեշ կըսը. - Հե՛յ վախ, իս ընկա անտարեւը մեղաց տակ: Ուր խաբար ոաստը: Լա՛ իս չըխանկացա, մըհա մա՛ ի՞նչըխ գըլոխ կիւնը:

Կերթա հանտե, տիվանխանե՛մ հողե՛մ կը նըստը, իրիք օր կը մընա հանտե, կըսը. - Իս մա՛ էյութին տը խասկանամ՝ մըհա մա՛ ինչըխ գըլոխ կիւնը:

Իրիք օր ընչ կը մընա, ուրինց ատաթը թարգ խուղզմաթքար կը գա, կը խարցընը, կըսը. - Աս տեղաց ատաթն ը, իրիք օր մըսաֆըր գա, նըստը, ուտը, խըմը, պառկը, թավալը, ուր իրիք օր պըրծնը, ուր գործ իւնը, տըսը, ուր չէ՛ տըրթա, մըկա քա՛ւ իրիք օր պըրծիր ը, քի ինչ խուղզմաթ կա, սա՛, թը չըկա՛ չըխո գընա:

Կըսը. - Իս կուզիմ ծի թագավորը ախչիկ տեսնամ:

Կըսը. - Ուըր անցկունը, աղե՛կ:

Կերթան ախչկան կըսին. - Դավրեշըն կա, կուզը ըզքի տեսնա:

Ախչիկ կըսը. - Աղե՛կ, սեցե՛ք մըհա թըղ գա:

Դավրեշին կըսին, դավրեշ կիւնը, կերթա մա՛ ախչիկ, ախչիկ նըստիր հիտիվ փարտին:

Ախչիկ կըսը. - Սա՛, մըհա ինչ կուզիս:

Կըսը. - Իս իկիր իմ ըստա, քա՛ւ հեութեն կուզիմ խասկընալ՝ մըհա տա՛ւ ինչըխ մա՛ խերաթխանեն կը բանցըցիս: Նա՛ թագավորութի՛մ չըկանա բանցըցը:

Կըսը. - Ուըր անցկունը, գընա՛ վաղ ասա գախ ա՛րը, չըխո տը խասկընաս: Սըհաթ վիցին ա՛րը:

Կերթա ուր տեղ, մեկէլ օր սըհաթ վիցին կիւնը, կերթա: Կերթա հանտե, կը նըստը, ախչկան պազըրկանպաշին կը գա, հանտե ախչիկ խա՛ պազըրկանին կը զըրուցը:

Կըսը. - Ի՞նչ էլավ, տեղ-տեղրանըն, դարտին դարմանըն էլա՞վ, թը՞ չէ:

Պազըրկան էլ կը տառնա, ախչկան կըսը. - Ան քառասուն տավը պեռ մալ մըսխիցը, դարտիս դարմանըն, տեղ-տեղրանըն չըխանկըցա:

Դորսեն ախշիկ պազըրկանին դաստուր կը տա, պազըրկան կերթա, ախշիկըն էլ դավրեշին կըսը. - Դավրեշ, տաւ պա՛մ խաակը-
ցա՞ր՝ մըհա մինք ինչ սիցինք:

Կըսը. - Չէ՛, իս ի՞նչ գընամ՝ տաւ ինչ կարե գրուցիցիք:

Կըսը. - Դավրեշ, ան իմ պազըրկան էր, քառսուն տավը պեռ
մալ տարեր էր ախշարք կը ցըրվեր, ֆաղկըրքիրուն հեքիմ, տեղ-
րանք կը խարցըներ: Ֆըլան թագավորը լաճ իմ իրիկն ը, ծըռիր ը,
ան մալ տարավ, ցովից, սըցին պալքը ծի թուղթըմ, ալաքըմ իլնը:
Չէ՛, չիլիրը, տաճրավ իրը, մա խերաթխանեն էլ իս ան սապըպով
իմ բացիր: Պալքըմ Աստըված մեկ ճար անը, իմ իրիկ սաղանա,
անօր ըզծիկ ուզիցին անու, ան հիրիկուն մի տը տանեն փըսա-
կեն, ան հիրիկուն թագավորը լաճ ծըռավ, ան ապով իս իմ խոր
խընեն պե խասցը պիրիր իմ ըստա խերաթխանեն պացիր իմ,
ուրտա վով գա, ուտը, խըմը, ուր բաշխիշ առնը, էրթա, տողա
անը, պալքըմ իմ իրիկ ժըրը, գա, ծիկ առնը:

Դավրեշն էլ էսաց. - Ըզի էլ կը տեսնաս, իս դավրեշ չիմ,
հուրիշ կազիմ թագավորըն էլ իս իմ: Դավրեշըմ էկավ, քու մաթ
արավ, իս չը ավտացը, էլա, էկա քի տեսնելու, մըհա ըշտակը, թը՞
չէ: Իկը, տիսի ըշտակ էր: Ուրը անցկունը, ահո իլնը, իսն էլ էրթամ,
կան գամ ախշարք, մըհա քու իրիկ տեսնամ, մըհա քու իրիկ ինչ
ապովը ծռիր: Մըհա չըմ կանա սաղցըրը, ուր տաւ էն ապով մա
կանտար խեր կանիս:

Ախշիկըն էսաց. - Ուրը աթարգ ը, ծրի ապով տը յաս, ա՛ռ քի
պարկըմ ուըսկը, գընա՛, լա տուր տեսնաս ուր հիլ-հավալ, ծիկ
գըրիս: Իս ահո իմ արիր, չուր ան չըսաղանա, յան ուր սալըխ
չառնիմ, իմ թու իրիկ չանիմ, քանը սաղը ախշըրքը վերեն:

Դավրեշ կիլնը, ծին կը խեծնը, պարկըմ ուըսկը կառնը, կը
յա: Խարցընիլով կերթա, ան կազեն կը ընցնը, կը խարցընը. - Նա
թագավորը լաճ վըրե՞ ծուռ ը:

Կը գա, պառվու՛մ տուն մըսաֆըր կիլնը, կը խարցընը:

Պառավն էլ կըսը. - Նա թագավորը լաճ Պալաք իզըմ կա, կը
խեծնը, կը գա թագավորը խաս պաղչեն, ան իզուց պայա կիլնը
անտ տեղ, քիրկըմ թաց թավը փետ կը գարկը անտ իզան,
արընթթախ կանը, կը արը հատե չուր էվարին, էվարին կիլնը,
էլմէլ անտ Պալաք իզ կը խեծնը, քաղքից կիլնը տաւս, կերթա սար,
մարթ չըգըտը դուր կը յա:

Դավրեշ էսաց. - Ինչ գն հատե, ըզի անախցըցու:

Պառաւ էսաց. - Ինչ ան կը գն, չըխողըմեն կանախեն:

Խըլիսուն ուրբաթ օր կիւնը, թագաւորու լաճ՝ ան ծուռ լաճ, ան Պաւլաթ իգ կը խեծնը, կը գն թագաւորը խաս պառչեն: Ատ դավրեշ կերթա հատե, կը կայնը չուն եւարին:

Եւարին ան թագաւորը լաճ ան Պաւլաթ իգ կը խեծնը, կիւնը, քաղթից կիւնը տուա: Ան դավրեշ կիւնը հիտիվ, կերթա, մուրղտարըմ կերթա, թագաւորը լաճ կիրիշկը հիտիվանց, կը խը՝ դավրեշըմ կը գն, ան էլ կըսը. «Դավրեշ ֆըղկարա՞ն յը, հիտիվ ուրը կուրսմըթին կը գն»:

Ատ էլ կը խանը մեջաց խանջար, կը խանը, կը թաւը հիտիվանց:

Դավրեշ կը գն, կառնը, կը յա հիտիվ:

Փըշու՛մ կերթա, էլմէլ կիրիշկը հիտիվանց, կը խը՝ դավրեշ հիտիվ անու կը գն, կըսը. - Կիւնը՝ նա դավրեշ շատ ֆըղկարա՞ն յը:

Կարցըկը ուր մեջաց ջարիկ, կը թաւը հիտիվանց: Դավրեշ կառնը, էմէլ հիտիվ կը յա:

Թագաւորը լաճ կիրիշկը, կը խը՝ էլմէլ դավրեշ հիտիվ ուր կը յա, կըսը. - Է՛յ, դավրեշ պապա, թը կուրսմա՞թ էր, խանջարըմ, ջարիկըմ տըվը, թը չէ՝ ի՞նչ հիտիվ ծյի կը գնա, տաննամ քյի սպանիմ, միղաց մեջ կը մըտնիմ:

Դավրեշըն էլ կըսը. - Թագաւորը՛րը լաճ, իս կարիպ իմ, տեղ չըկա, կուզիմ հասօր գնմ քյի մըսաֆըր, չուր խըլիսուն էլնիմ, էրթամ:

Թագաւորը լաճ կըսը. - Դե՛հ, ա՛րը:

Կը տանը մատ ինք: Հիրիկուն կը մըստին հատե, թագաւորը լաճ խաց կը պիրը հատե, կուտին: Դավրեշ խաց չուտը:

Թագաւորը լաճ կըսը. - Վըրե՞ չըս ուտը:

Կըսը. - Ահդ իւնը, չուր տու ծի չըսիս մըհա քու սնապիպ ի՞նչ կը՝ տու ծռիր իս, իս քու խաց չուտիմ:

Թագաւորը լաճ էլ կըսը. - Մեկ յարեմ էլաւ վար ծյի, ծովու մեջ ատե՛մ կեր, ան հեքըմ իմ պըրին աչքից, իմ խոր էսաց՝ գընա՛, քու տըղեն թըղ կենա ըստա չուն ութ օր, կը սնողացըցիմ, ա՛րը տա՛ր: Իմ խեր իրը, իս մընացը հատե չուն հիրիկուն, հիրիկուն ան մարթ տըսուց կընիկըմ առից, իրը, էսաց. «Դե՛, տու կա՛ց նա հողեն, իս, իմ կընիկ կը մնանք ըստա չուր խըլիսուն, քյի տեղ կը

տանք, կը սաղանա»։ Անունք մընացին ան հօդեն, պոմ մընաց, իս գաղտնիկըմ գացը, թամաշա արը, կը խիմ՝ անտ մարթ էլավ, պարկըմ իպը, երկու սիվ օց էխան տուս, անտ կընիկ չըփլախցուց, կայնացըցուց պատը իրիս վե, անտ օցիր իթող մեկ ան ծըծը տակ բռնից, մեկ ան ծըծը տակ, անցկում ծըծիցին ըզկընիկ, չուս կընիկ քամկեն տեսավ քեզին, մեռավ։ Օցիր էլան քանց գերանըմ, անտ օցիր իպը, կախից հանքեն պերնըսվե, պըղինծըմ իտը հիրճիվ անունց պերնը ճրուն։ Իս գաղտնիկ թամաշա արը, տեսա։ Խըլիսուն էլավ անտ մարթ, կանչից ըզծի։ «Ա՛րը, իմ կընիկ մեռիր, տանինք թաղինք, յան թալինք ծով»։ Իս գացը, կը խիմ՝ անտ օցիր վիրուցիր, տըրիր պարկըմ վե, կախիր պատեն, անտ պերնը ճուրըն էլ արիր մեկ, լըցիր պըղինծ վե, տըրիր հանտե։ Ատու կընիկ իս, էն խընտրաց պիրինք, թալցինք ծով, էսաց. «Գընա՛ տուն, փըշու՛մ ծավար խիտ, եղ գի պըղինծ վե մատաղտ ինը, լի՛ց վերա, կյի՛, ծի ըստա պան կա, գիմ ծավըր վերեն եղ չըլըցիս, չուս իս գան, նուր կուտիմ»։ Յիս էլ իկը տուն, ծավար իփիցը, էն, դուր կան իկը, եղ չըկընտա, իկը, տեսա, ուր ինչ կըսեր պըղընծը եղ՝ հերեկվան օցի պերնի ճուրըն էր, օր իս տեսա, իսըն էլ գըցա ժախըր էր չըկերա, ան ժոռ ծավար կուշտ կերա, անտ ժախըր, ընչ ան կըսեր, կես լըցը մանչ ան ծավրին, խանցիցը, իկը անճար պամկը, ըզի արը սուք խիվանդ, մընաց, կեսօրին անիկ իրը, իս հանա վար իմ ծընկնիրուն կան իկը, սիցը. «Յամա՛ն, իմ փուր, իմ սերտ, իմ գըլոխ, իս վանվա, իս պահլա, իս գախ ը մեռնիմ»։ Ատ մարթ էսաց. «Տիւ եղ քիչ իս լըցիր վերա, անժոռութեն քյի տիպիրը, քիւ փուր կը ցավը, մըկա կը ժըրիս։ Ե՛յ, - էսաց, - տու եղ լըցի՞ր իս իմ փայ ծավըր վերա»։ Սիցը՝ չէ՛, տիւ սիցիր՝ մը՛ լըցը, իսն էլ չը լըցը։

Էսաց՝ խալեմ ըզիմ ան անժոռն ը, ինչ մընացիր, սիցը՝ խա՛, ան էլ հանա գտել առից, երկու գտել լազ-լազ կերավ, երկու գտել խատ ուտիլուն ուղտքիր խուս տապլապազ, էլավ փետ հանտե, իս էլ էլա, անու ուղտքիր պըռնիցը, տարա թալցը ծով, իկը գատու պարկ, ինչ օցիր հինը, ան էլ տարա, թալցը ծով, իկը ընկա գանու հօդեք, անու մըղաղեք կան իկը, պըզտիկ գիրքըմ տեսա, ան գիրք կարդացը, իմ պըրնը տեղ հանտե տեսա, տըվը սաղացավ, անտ գիրք խորոտըմ կարդացը, տիւռըմ բացվավ, երկու խատ արապ իկին բալթեք ձեռքիր, երկու խատ չալղըչը իկին, երկու խատ մուտը իկին, նըստան մեկ ան ծընկուն վերեն, մեկ ան, կիրկ

բիրին պուլուր իմ վրդին, մենք քեֆ արինք, մընացը հաստե, աստ հալը մեջ, չու՜մ ութ օր թումըմավ, իմ խեր կայեխ հորողկից, իս նըստա կայեխ, գացը: Էլանք տաւս, Պասրանու քաղքը թագավորը ախչիկ ծրի խանար ուզեր էր, ծի էլ տարան համամ, ըզծրի համամլամիշ արին, որ իս էրթեր մահրըվեր, իս համամը մեջ խալավ խանիցը, տը լողկաներ, աստ պըզտիկ գիրք պըռնիցը իմ ձեռ, մեկէլ ձեռնով ըզի կը վեր, համամչին էսաց. «Թագավորը լաճ, մենք չընք կանա գա ըզքի լողկանցը, ուր տաւ կապուլ չըս անը, քաւ գիրք տի՛ գետին, պստա՛հ լողկացը»: Գիրք ինչ տըրը գետին, խատ տընիլուն մեկ մարթըմ էզար, աստ գիրք առից, փախավ, իս անցկու՜մ կարցա իմ շապիկ, թումպան խագա, ընկա հիտիվ, չուր գընաց ծովու պերան, անիկ ըզինք համա էթալ վար ծովուն,՝ գընաց, իս չըկարցա, իսն էլ կըսկըծու իմ խելք թալցը, ան ան տարին, նա նա տարին իս ծուռ իմ: Մըկա նա Պալաք իզ ինչ իս կը խեծնիմ, ան էլ անու՜նց մոտեն ը, ան գիրքը մեջն էր, իսըն էլ անու կը խանրընիմ, սալըխ չի տա, իսըն էլ իմ կըսկըծուն համ կը խեծնիմ, համ էրկու տան կը տըփիմ: Ան գիրք մըկա տան ըզի, իս տեսնիմ, իմ խելք կը գա վար ծրի, իս կը ճարտըրվիմ:

Նա թարգ դավրեշին կանսա կանը:

Դավրեշ էլ կիւնը խըլխուն, կըսը. - Ահդ իւնը, իս յամ, քաւ գիրք բիրիմ:

Կիւնը, կը թըղնը կերթա, կերթա ախշարք կան գալ: Զանցի՛մ տաւ վե կընցընը, ջաղանցպան կը կանչը, կըսը. - Հե՛յ, թագավոր ապրած կենաս, ըզքի արիր իս դավրեշ, ի՞նչ կան կը գաս:

Կըսը. - Է՛յ, ջաղանցպան, տաւ ինչ գըտիս՝ իս թագավոր իմ:

Զաղանցպան էսաց. - Իս գըտիմ՝ տաւ թագավոր իս, նա ֆըլան թագավորը լաճու գիրք կուըրսուըրը, տաւ տ'երթաս անու հիտիվ, ան ապով կան կը գաս: Կերթաս ֆըլան տեղ, ջամի՛մ կա, աստ ջամին չուրս դավրեշ կան, հըմեն մեկ քուընճըմ կայնիր ին, թագավորին տողա կանին, աստ դավրեշ մեռիր ը, աստա մեկ քուընճ մընացիր պարապ, տաւ էլ գընա՛ աստ քուընճ կայնը: Թագավոր կը գա, կերթա ջամին, ըզքի հանտե կը տեսնա, կըսը՝ ո՛ւր, դավրեշ, բարով իս էկիր, տաւ յի՞փ իս իկիր: Տաւ էլ սա՛ իս էստեղ քյի տողա տ'անիմ, քյի լաճըմ տ'իւնը, ըզծիկ իմ մըրագին տը խասցը: Թագավոր տ'ըսը՝ իս թագավոր իմ, ըզքի չըմ կանա քաւ մըրագին խասցը, նուր ծի լաճըմ տ'իւնը, ըզքի քաւ մըրագին խանցը, ահդ

իլնը, տաւ կենաս հատե, թը ծի լաճ էլան, թըղ իլնը, ըզքի քու մըրագին խասը:

Դավրեշ քաղաքականը խաբրով արավ:

Դավրեշ իրը, կայմավ ան քուրմ, չուժ թագավորին լաճըմ էլան, ան օր գիշիր թագավորին լաճըմ էլավ, Չաչանց թագավորին ախչիկըմ էլան, ատ լաճ, ատ ախչիկ կը սիրվին վար մեկմեկու:

Ատ թագավորըն էլ ըզատա դավրեշ շատ կուզը, շատ կը պաշտպանը: Կըսը. «Նա դավրեշ աղեկ մարթ էր, ծի լաճ չըր իլիր, ան ծի էսաց՝ ծի լաճըմ էլան»: Կը տանը, կը տընը ջոկ հօդե՛մ, խուրլամքտիր կը տընը հիրճիվ, աղեկ կը շախը:

Ատա լաճ կը ճուճանա, ֆեհմա կիլնը, ատա դավրեշն էլ կընը ատա վարժապետ, տաս կը տա, չուր լաճ խորոտ կը ճուճանա: Չաչանց թագավորը ախչիկն էլ դորսեն կը յա, կը գա մա ան:

Դորսեն դավրեշն էլ կիլնը, ատ թագավորին կըսը. - Քու լաճուն սա՝ դորսեն ըզի իմ մըրագին խասը, իս էրթամ էրկիր:

Թագավոր ուր լաճուն կըսը. - Նա դավրեշ քիկ ինչ սը, տաւ անու խաբրով անիս: Անու մըրագին ըզան խասցիս:

Դորսեն դավրեշն էլ թագավորը լաճուն կըսը. - Թագավորը լաճ, իս զըտմամ Չաչանց թագավորը ախչիկ կը գա մատ քիկ, իմ մըրագն էլ էն ը՝ մի գիրքըմ կա մի թագավորը լաճուն, ան գիրք Չաչանց ախչիկան խոր թախում փախցըցած, տարած ուրինց երկիր, ան ախչիկ ինչ կը գա մա քի, տաւ էլ դարպուն սիլի՛մ գա՛ր մանչ պերնին, սա՛. «Չըզան իմ բուլուր, գողիր, տաւ զըմեն գող եք, չըզան մա ծիկ»: Ախչիկըն էլ տը լա, տ՛ըսը. «Իս ի՞նչ իմ գողցիր»: Տու էլ սա՛. «Մի թագավորը լաճուն մեկ գիրքըմ ծի թախում գողցեր եք, քաւ խոր սա՛, թըղ խանը տաւս, ա՛ռ, պի՛ մա ծի: Թը չէ, էլ չըզան մա ծիկ»:

Մեկէլ օր ախչիկ կը գա, թագավորը լաճու վիզ ձեռ կը թըլը բուլուր, թագավորը լաճըն էլ մեկ պըռընցկիմ կը գանը մա պերնին:

Արուն կը լըցվը մա պերնին, կըսը. - Գողի՛ր, տաւ գող եք, ծի սոյ սաղ գող ը, ան մա ծի չըզան:

Ախչիկ կըսը. - Իս ի՞նչ իմ գողցիր:

Կըսը. - Մի թագաւորը լաճուն պըզտիկ գիրքըմ գողցեր եք, յան էն գիրք կը բիրիս, յան մա՛ ծյի չըգաւս:

Ախչիկ կիւնը, լալեւեն կերթա մա՛ ուր խեր:

Խոր կըսը. - Նա՛ ֆըլան թագաւորը լաճուն գիրքըմ քու մըլաթ գողցիրը, պիրիր, յան ա՛ն գիրք կը խանիս տաւս, իս առնիմ, էրթամ, յան չէ՛ ա՛ն լաճ չըթըղնը իս մա՛տ ա՛ն էրթամ: Կըսկըծու ըզծի տը ըսպանիմ: Ուրը տաւ իմ խերն իս, ա՛ն գիրք խա՛ն տաւս:

Ախչըկան խերն էլ կիւնը, ուր մըլաթ կը կանչը, հըմենանց կը խարցընը, կըսը. - Ատ գիրք ո՞րն ը բիրիր, խանցեցե՛ք տաւս:

Հըմեն կը հերդվան, կըսեն. - Մենք մեկըն էլ խաբար չենք:

Մեկ ա՛ն կընարեն կըսը. - Ուրլա՛, Դատվանա զըզիրն ը բիրիր:

Ա՛ն էլ կը հորողկը, ըզԴատվանա զըզիր կը բիրը:

Կըսը. - Ա՛յ զըզիր, հո՞ւրը գիրք:

Զըզիր կըսը. - Իս բիրը չուր կես ծովուն, Ֆըռընգաճ տեվիր զարկիցին վար իմ ձեռաց, իցկիցին ծով: Գացիր ծովու մեջ մեկ աթուռաշենք քարի՛մ վերա մընացիր, էրկու աթապ բալթեք տա-րած, թիվ կայնած կը շախին, վով ինչ էրթա, կը զարկին, ուր տեղ ուրը բալթեք տեպնա, սիվ ճուր կը տա տաւս:

Ատ թագաւորըն էլ կը հորողկը, ա՛ն ուսթա աղեն չանկալ-քիր, կայեխքիր իպը, էսաց. - Ձենե կուզիմ, էրթաք էն գիրք որ-տեղ ընկիր, ուըսթութնով խանե՛ք, բերե՛ք:

Էլա՛ն, ըզզըզիր առին, գացին ա՛նտեղ, ինչ գիրք ընկեր էր ծով, կայեխ կայնացըցին, դուլպինդ դրին, իրիշկիցին, ծովու տիփ ըզգիրք տեսան:

Էն էլ բիրին, չանկալ շինիցին, իցկիցին թիւը ծեր, տարան, կախիցին ծովու տակ, բըռնիցին ըզգիրք, հա՛վայը քելիցին, քելի-լու պես ա՛տ բալթեք զարկիցին վար քարեն, սիվ ճուր իտու տաւս:

Գիրք առին, իկին, տվին ըզթագաւոր, թագաւոր իտու ըզուր ախչիկ, ախչիկ առից, իրը մա՛տ ուր մարթ, էսաց. - Ա՛ն, վըրե՞ իսն էր գողցիր, Դատվանա զըզիրն էր գողցիր, կո առին էկին, իս էլ բիրը, ա՛ն:

Ատ էլ կառնը ըզգիրք, կերթա: Կերթա թագաւորը մոտ, կըսը. «Դորիս ծյի իզին տու, իս յա՛մ իմ էրկիր»:

Կըսը. - Իմ լաճ ըզքյի քաւ մըրազին խասցուց: Դեհ, քաւ մը-րազ արա, մըհա՛ ի՞նչ կուզիս:

Կըսը. - Ձյի պա՛ն չըպը, մեկ ծի տըվե՛ք, ծի բա՛ս ը:

Ձի'մ կը տա անու, ճամխը խարճըն էլ կը տա, խաթըր կուզը, կը թըղնը, կերթա:

Կերթա, կերթա, կը գա ատ երկիր, ընչ թագաավորը լաճ ծըռեր եր, կերթա ատու մոտ, կերթա խաս պանդչեն, թագաավորը լաճ խըլխուճն ընչ արիվ կը տեպնա, կը գա ըզՊալաք աչան խեծիր: Կը գա, ինչ իրը խաս պանդչեն պայա էլալ: Գիրկըմ թաց փետ էզար, ատ Պալաք աչառուն զըմեն սըղկեց, Պալաք աչանը կուղ-կուշտ սաղ արընթըթախ արավ:

Ան էլ կը նըստը հանտե չուճ էվարին, էվարին ատա լաճ էլալ, ըզուր աչան խեծավ, գիրկըմ թավը թաց փետ խող ուր կուք, զընաց:

Դավրեշն էլ էլալ, զընաց հիտիվ, չուր քաղքեն էլալ: Թագաավորը լաճ իրիշկից հիտիվ, կը խը՝ դավրեշն ընկիր հիտիվ, կը գա: Ան էլ խանջար անցկից, էթալ, էսաց՝ աղքատ ը, թըղ առնը, տա խացը, ուտը:

Խանջար դավրեշ առից, ընկավ հիտիվ, զընաց: Տիր մ՝ էլ իրիշկից, տեսավ էլմէլ ընկիր հիտիվ ուր, կը յա:

Էսաց. - Հա՛յ, կա յէ մա շատ խեղճ ը, անով ուր խտարեն չիլնը:

Էխան ուր ջարիկն էլ էթալ, էսաց՝ թըղ մա էլ տանը, տա ուր խացը:

Դավրեշն էլ ըզջարիկ զըրկից, զընաց:

Փըշու՛մ էլ զընաց, թագաավորը լաճ իրիշկից, կը խը էլմէլ հիտիվ կերթա:

Էսաց. - Ա՛յ դավրեշ պապա, ի՞նչ կուզիս, թը կուըսմաք կուզիս, տըվը, ալ խանտ ծի գատ չըկա, տա՛րը, թը չէ՝ ըզքյի տը ըսպանիմ, քու միղք կիյնը իմ վիզ: Տու խեղճ իս:

Դավրեշ էսաց. - Թագաավորը լաճ, հասուր կուզիմ գամ քյի մըսաֆըր:

Թագաավորը լաճ էսաց. - Ուըր անցկունը, դե ա՛րը, խա՛սը խընտրաց էթանը:

Դավրեշ զընաց, խասավ:

Օուռ լաճ էսաց. - Տու ան տըրվան դավրեշ չի՛ս, ինչ իկիր մա ծյի:

Էսաց. - Խա՛, իս էն իմ:

Գացին սար, հերը մեջ, խաց տղրին հանտե, խաց կերան, դավրեշ էսաց. - Մըկա քու գիրք տաւ տեսնաս, կը ճանչընա՞ս:

Թագավորը լաճ էսաց. - Խա՛, ան գիրք մըկա խագար չեշիտ գըրքը մեջ իլնը, կը ճանչընամ:

Դավրեշ գիրք էխան տաւ, էսաց. - Նա քա՛ւ գիրքն ը:

Առից, իրիշկից, էսաց. - Ահա՛, նա իմ գիրքըն ը:

Էսաց. - Դավրեշ պապա, տաւ քաւ խելք վար քյի բըռնը՝, իս նա գիրք կարդամ: Դու կիմանաս չըխտ ինչըխ կը, մըհա մարթ կը ծըռը, թը չէ:

Թագավորը լաճ ատա գիրք կը կարդա, տաւ կը բացվը, չալըըչիք կը գան, մուտիք կը գան, փարիք կը գան, շատ տեսակ պանիր մեջ կիլնը:

Մեկըն էլ կիրիշկը, կը խը ատ դավրեշ հաշ գացիր, ընկիր գետին: Ան էլ հանա ըգգիրք կը կուծը, կը տանա վար դավրեշին: Դավրեշը սիրտ կը մայը, ճուր կը լըցը վար գըլխուն, հալ կը գա վերա, կըսը. «Դավրեշ, ի՛լը նըստը, մըհա քիկ ի՞նչ էլավ»:

Դավրեշըն էլ կըսը. - Իս սալըխ չըմ իտա՝ ինչըխ իլիր:

Կըսը. - Դավրեշ, իս ժըռա, ի՛լը, էրթանք մատ իմ խեր: Նա գիրք ուըր իս տեսա, իմ խելք իրը իմ գըլխ: Լա՛գ իլը, էրթանք:

Կիլնին, էրկուս խընտրաց կերթան թագավորը մոտ: Թագավոր կը տեսնա, ուըր ուր լաճ ժըրիր ը, իլիր ինչըխ հառաջ մարթ, թագավորըն էլ շատ կը խընտանա, կուրախանա:

Թագավորը լաճըն էլ կըսը. - Աստըված, լա նա դավրեշ էլավ սապիպ, իս ժըռա:

Ատ դավրեշըն էլ կըսը. - Թագավորը լաճու Աստըված իտու, տաւ ժըռար, ընցկընեմ տարը կա Պասրանու թագավորը ախչիկ քյի ապով խերաթխանե՛մ բացեր էր, քառսուն փանջարա թըխեր էր, համեն փանջարից քաֆիկըմ կը գեր տակ, համեն քաֆիկը մեջ քառսուն ուըսկը: Կը լըցեր հիմը, վով էտ տեղեն յեր, առներ, էրթեր, տողա աներ քյի խամար, ուըր տաւ ժըրեր: Պագըրկա՛մ էլ ընկեր էր ախշարք, քառսուն տավը պեռ մալ կը ցըրվեր հեքըմքիրուն, թուղթ արողքիրուն, ֆըղկարացտիրուն, ուըր տաւ ճարտըրվեր, ուըր տաւ ժըրեր, ընցկընեմ ուըխտ կա, անիկ քյի ապով ըսկընեմ մասրաֆ կանը, խերաթ կանը, հասօր Աստըված իտու, տաւ ժըրիր իս, մըհա ինչ կըսիս, մըհա տ'երթա՞ս ըգէն առնիս, թը՞ չէ, իսըն էլ ֆըլան տեղաց թագավորըն իմ, իսըն էլ դավրեշ չիմ,

իսն էլ քիչ անպով ընկիր իմ, կան կը գամ: Մըկա Աստղված իտու, տու ժըրար, մըկա ի՞նչ կըսիս:

Լաճըն էլ կըսը. - Աստղված ուր խեր կանպուլ անը, շատ շնորհակալ իմ ուր մոտեն, ուր են ծի անպով խերանք կանը, իս էլ թու մարթ չիմ առնը, էլ չըմ փըսակվը, Աստղված ուր խաց խան-գիստ տա, ուրը թը կըպը, թըղ յա, խատ մեկի՛մ փըսակվը: Դորսեն ինչ իմ ջան ուզը՝ թը փըսակվիլ իլնը, թը ինչ իլնը, մա գըրթը մեջ կա: Էլ ինչ տ՛անիմ փըսակվիլ:

Դանվրեշըն էլ կըսը. - Անու քու ձեռաց գիրըմ գըրը՛, քու մո-հըր գա՛ր վերա, թը անու մըշա՛մ կա մա քի, տու տանիմ, որ ծի ավտա: Թը չէ՛ չը ավտա:

Լաճըն էլ գիրըմ կը գըրը, անու մատնիկըն էլ կը տընը մանչ անու թղթին, ուրը մոհըր կը գարկը վերա, կը լոթը, կը տա ըզդանվրեշ:

Դանվրեշ կառնը, կը յա:

Կը յա Պանսրանու թագանվորը ախչկան մոտ, կը խը տալ խե-րանքխանեն անկուսն կը պանը, կըսը. - Թագանվորը ախչիկ, իմ անկանցկալեն, քու մարթ ժըրիր ը, ա՛ռ, քի թուղթըմ պիրիր:

Պերնով դանվրեշ թագանվորը ախչկան կը պատմը՝ ինչըխ գացիր, ինչըխ իկիր: Ջըմեն թագանվորը ախչկան կը պատմը: Թուղթըն էլ կը տա, կառնը, կը բանա, կը կարդա, կը խանսկընա, մատնիկ կառնը, թուղթ կը պագնը, կը տընը վար գըլխուսն, փառք կը տա Աստղծուն:

Կըսը. - Տիր մ՛ էլ իս անու ժըրը ձեն լըսա, դորսեն ինք ուր քեֆնը:

Ատ դանվրեշ ատ ախչիկ շատ կը գրուցին:

Դանվրեշ կըսը. - Ախչի՛կ, իս տ՛երթամ, ան դանվրեշ հափսը մեջն ը: Տ՛երթամ, թը մեռիր ը, չըխ անու միղք մընաց իմ վիզ, թը չէ, իս իմ ձեռնով անու աղեկութեն իլնիմ, ուր միղք իմ վըզեն խա-նիմ, չըմեռնը, անու միղք մընա իմ վիզ:

Ախչիկ կըսը. - Թագանվոր՝ ապրած կենաս, ուրը տու կանգիմ թագանվոր էր, մա կանտար մի անպով չանփալանիշ էլար, ախշար կան իկիր, չարչըրվար, մըկա էրթաս, իս էլ կենամ էստեղ, չիլնը, իս ուղխտ արեր էր ատ մարթ ապով, որ ժըրավ, տու էլար սանպիպ, ան մարթ ուրը ծի չառից, տու ա՛րը, ըզի ա՛ռ, էրթանը:

Թագանվոր էսաց. - Աղե՛կ:

Ուրինց թատարիք տեսան, էլան, տըվին ճամբախ ինք, ան ախչիկ:

Իկին, գացին թագավորը տեղ, գընաց, կը տեսնա ան դավ-
րեշ ինչ հափսը արիր, անցկում խավվուրցիր, մուրուս տեղնըցիր:
Ան էլ կը հորոդկը, համանլամիշ կը տա անիլ, կը բիրը ձեռքըմ
թագավորը խալավքիր, կը խագցը, կը տընը ուր կուշտ, կանը
ուրզիր:

Կըսը. - Կի՛, խըմը՛, չում մեռնիս: Հանգիստ ապրիս:

Մեկ սարսուփ, թամիզ հոդե՛մ կը տա, ծառա՛մ կը տընը
հիրճիվ:

Թագավորըն էլ դանալ կը տա կանչիլ, ուր մարթիր կը
ժողվը, յոթ օր, յոթ գիշիր խարսնիս կանը, Պասրանու թագավորը
ախչիկ կառնը:

Անունք կը խասսեն ուրինց մըրագին, դուք էլ՝ ձեր մըրագին:

